ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՍՈՒՐԵՆ ՊԱՐՈՆ ՍԱՐԳՍԵԱՆԻ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՍՈՒՐԵՆ ՊԱՐՈՆ ՍԱՐԳՍԵԱՆԻ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԵՆ ՊԱՐՈՆ ՍԱՐԳՍԵԱՆԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՍՈՒՐԵՆ ՊԱՐՈՆ ՍԱՐԳՍԵԱՆԻ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՄԵԿ ՏԱՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԵՐԹ

№ 191–ՇԱԲԱԹ 27 ՅՈՒԼԻՍ 1889 Թ.

ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ

Ամեն մարդ իր հայրենիքը կը սիրէ, ամեն մարդ իր հայրենիքին համար կ՚ուզէ ամէն բարիք, ամէն յաջողութիւն, ամէն փառք։

սիա տուել մեզ։ Հետևարար դեռ մեր իրաւունքից էր Ճեռմ ընկերութեան վերայ 12 ռ. 84 կ., իսկ ընդհանուր գումարից 150 ռ. 81 կ., որ և մինչև այս տարուայ ապրիլի ըսկիզբն Ճեաց ընկերութեան վերայ։ Այժ իսկ միջոցին ներկայացրած հաշուի համաձայն թէև կ. գրավաճառանոցը պարտ էր Ճեռմ ընկերութեանը 81 ռ. 7 կ., բայց եթէ այն 94 ռ. 15 կ., որ դեռ ապահիկ Ճեռմ գանձան անձանց միջոյն ընկերութեան գրքերից, ինչպես և ձեզ յայտնի է, մեր պայմանի համաձայն գումարն գայիք հաշուից, այն ժամանակ կ. գրավաճառանոցն պահանջ կունենար դաբձեալ 13 ռ. 8 կ.։ Եվ որտեղից կ տացել կ. գրավաճառանոցը ընկերութեան փողն և գրկել նրան մի օգտաւէտ գիրք հրատարակելուց։ Եթէ գումը ընկերութեան հրատարակած հաշուի միևնոյն երեսում նշանակած մուտքն էլ ուշադրութեան առնէիք, թերևս այս հակասութեան մէջ չընկնէիք։

Իսկ 19 ռ. 50 կոպէկին գալով՝ կարծում կը, որ ձանապարհի ծախսը լինի։ Ի՞նչ կարծելու բան կար, երբ որ ինքներդ էիք վճռել այդ։ Թէ չէ այնուամենայնիւ կամենում էիք, որ մեր ստացած 10%-ի փոխարէն հանեի վճարելուց 5%-ն էլ միւս գրավաճառներին տալուց յետոյ մի 10%-էլ ձանապարհի ծախս տայինք։

Սրանից յետոյ Ճեռմ է խնդրել ձեզանից, կամ ցոյց տալ կ. գրավաճառանոցի հաշիւների անճշտութիւնը, կամ հրատարակաւ յետ առնել ձեր անտեղի գրպարտութիւնը կ. գրավաճառանոցից, ինչպես չէք զլացել, գուցէ սխալմամբ ըստատեր ձգել այն հիմնարկութեան վերայ, որի անշահասիրութիւնը դուք տեսել լաւ կարող էիք գնահատել, երբև միշտ յաճախող և գործին ուշ ուղղութեան տեսչի ծանօթ, քան թէ որևիցէ մի ուրիշը։ Հակառակ դէպքում ստիպուած կը լինինք այն սխալը հզրակացութեանը գալ, որ ձեզ համար գովելին և պարտաւորը միևնոյն նշանակութիւն ունի։ Եթէ հարկ լինի կարող ինք ներկայացնել մանրամասն հաշիւն, որ մեր աշխատանքի համար երկու տարուայ ընթացքում ընկերութեան բոլոր գրքերի վաճառմանքից ոչինչ չահ չենք ունեցել, ինչպես և այն յարգելի անձանց անուններին, որոնք դեռ չեն բարեհաճել ընկերութեան գրքերի ապառիկները մեզ հասցնել։

Ս. Տէր-Իսրայէլեանց։

Թիֆլիզ, 25 մայիսի 1881 թ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

XIV

Վերջին քաղաքական տեսութեան մէջ մենք խոստացանք խօսել ներկայ քաղաքական դրութեան վերայ, այսինքն, թէ ինչո՞ւմն է կայանում այժմ Գերմանիայի քաղաքական դերազանցութիւնը քաղաքական աշխարհում։ Այդ հասկանալու համար հարկաւոր է ծանօթանալ մեզ Եւրոպայի բոլոր տէրութիւնների բոնած դիրքերի և միմեանց մէջ ունեցած յարաբերութիւնների հետ։ Եւ որովհետև այժմեան քաղաքական գործողութիւնը չէ դեկավարվում զգացմունքներով, համակրութիւններով, առաջուց պէս էլ մի այնպիսի նշանակութիւն չունի այն հանգամանքը, թէ այս ինչ երկրի իշխանը այս ինչ թագաւորի աղջկայ վերայ է պսակված, կամ ազգակցութիւն ունի մի ուրիշ աւելի զօրեղ երկրի իշխողի հետ, այլ քաղաքական գործողութիւնը դեկավարվում է լոկ շահերով։ Պարզ է, որ ամեն մի երկիր, ամեն մի պետութիւն մտածում է մէկ ուրիշ պետութեան հետ իւր շահերի համար, կամ հեռանում, բաժանվում, նրա ընդդէմ գնում կրկին իւր շահերի համար։ Մենք չենք կամենում խօսել Եւրոպայի երկրորդական, երրորդական պետութիւնների վերայ, որովհետև դրանք քաղաքական աշխարհի վերայ այնպիսի մի էական նշանակութիւն չունեն։ Կան տէրութիւններ, որոնք մեծ պետութիւններից հենց իրենց օգտի համար չէզոք Ճալու դատապարտուած են, ինչպես են Զուիցերիան, Բելգիան, կան տէրութիւններ, որոնք ստիպուած կամ իրենց շահը ի նկատի առած՝ պէտք է հետևին այս ինչ պետութեան կամ այն ինչ պետութեան քաղաքականութեանը, կամ իրրև դործիք նրանց ձեռքում գործեն և բանեն այնպիսի դիրք, ինչպիսին կամենում է այս կամ այն մեծ պետութիւնը, օրինակի համար՝ Սպանիան, Պօրտուգալիան, Շվէդիան, Նօրվէգիան, Թիւրքիան. . . որոնք ուղղակի ոչինչ ապրեցութիւն չեն կարող ունենալ Եւրոպայի ընդհանուր քաղաքական կեանքի վերայ, չեն էլ կարող մի եւրոպական խընդիր վճռել։ Մեր խօսքը պէտք է լինի ուրեմն Եւրոպայի միւս տէրութիւնների, այսպէս կոչուած «մեծ պետութիւնների» վերայ։ Եւրոպայի ենթ ասում, որովհետև Ամերիկայի Միացեալ-Նահանգները Ատլանտեան ովկիանոսով բաժանուած Եւրոպայից՝ ոչ թոյլ են տալիս Եւրոպային, որ խառնուի իրենց ամերիկական դործերում, ոչ էլ իրենք խառնվում են եւրոպական դործերում։ Այժ մեծ պետութիւններն են՝ Գերմանիա, Անգլիա, Ֆրանսիա, Ռուսաստան, Աւստրիա-Ունգարիա և Իտալիա։ Սրանք են վճռում ամեն եւրոպական խնդիրներ, որոնք կարող են և վճռել երկրագնտիս և միւս մասերում կատարվող դործերը։ Սրանք են առաջնորդում տարածելու Եւրոպայի քաղաքակրթութիւնը, լուսաւորութիւնը, արհեստը, գիտութիւնը, միով բանիւ բարձր մշակութիւնը աշխարհիս միւս մասերում, սրանց չնորհքովն էր որ Եւրոպան սիրաշուռում էր երկրագնտիս միւս մասերի վերայ թէ քաղաքական, թէ տնտեսական, թէ ֆիզիքական և թէ բարոյական ուժովը։ Այս էլ պիտի ասենք, որ այժմեան դարը դարերի մէջ ամենազարգացած, ամենալուսաւորուածն է համարվում Եւրոպայի շնորհիւ, թէպետև այդ քաղաքականութիւնը, լուսաւորութիւնը դեռ այն աստիճանի վերայ է կանգնած, որ նրա մէջ հէնց գլխաւոր գործողները իրենց գիտութիւնը, իրենց արհեստը, իրենց անտեսական այժերը մեծ մասամբ գործադրում են միմեանց դէմ յարձակուելու և միմեանցից պաշտպանուելու համար։ Եթէ եւրոպական այդ մեծ պետութիւնները իրենց մէջը ունենային հազարերորդն այն մասից, որը իրենք բերանով ասում են, Թանաքով գրում են, եթէ այդ մեծ պետութիւնները միացած Միացեալ-Նահանգների հետ միասին համաձայն դործէին մարդկութեան յառաջադիմութեան, բարօրութեան համար, եթէ այն ահագին միջոցները, այն ահագին գումարները, որ վատնում են դէնքի վերայ միմեանց ջնասելու, միմեանց կործանելու համար, գործադրէին երկրագնտիս ամեն մասերում դիտութիւնը, լուսաւորութիւնը տարածելու։ Եթէ այդ մեծաքանակ ապարդիւն վատնած գումարների և ոյժերի մէկ մասը գոնեա գործադրէին երկրագնտիս միւս մասերում երկաթուղիներ շինելու, ջրանցքներ բանալու, ձանապարհներ հարթելու և ուրիշ հազար ու մէկ մարդկութեան բարօրութեան նպաստին հիմնարկեալ թիւններ հաստատելու համար, այն ժամանակ Աֆրիկայի ամայացած երկիրներում, Հնդկաստանի մէջ, Ասիական վայրերում, Չինաստանի վայրին դաշտերում շոգեկառքի ուրախութեամբ եւրոպական լուսաւորութիւնը կը տարածուէր աշխարհս հեռու շուրջը, մարդիկ տգիտութեան խաւարից, բռնութեան կապանքներից ազատուած կ'ապրէին մարդկորէին, այն ժամանակ մարդկութեան կարծեցեալ օրօրոցը, Միզրիս, եւրասիա գետերի մէջ երկիրը—Հայաստանը մարդավայել, ազատ թիւն կը վայելէր և մարդկութեան մէկ ճիղը, հայերը գարեր լուծը քաշելով մինչև օրս չէին նեղուիլ թիւրքի բռնութեան և վայրենի քիւրդի մահաչնող սրի տակ, հարկաւորութիւն էլ չէին ունենալ այս կողմ այն կողմ ապերսելու, սրան նրան կեղծելու. . . ազատ հայրենիքում կ'ապրէին ազատ մարդիկ։ Բայց այդ ամենը պէտք է լինէր. բնչ անենք, որ չը կայ, չի լինում։ Ինչ որ կայ, ինչպես որ կայ այն առնենք ի նկատի և նրան համեմատ դործենք։

(Կը շարունակվի).

Ս. Ս.

Ֆիլիպպօպոլից յունիսի 11-ից դրում են «Lit. Corresp.»ին լրագրին «Ռուլղարիայի իշխան Ալէքսանդրի վերայ հրամանագրերը ըստ ամենայն երեոյթի կը հաստատեն նրան, որ ազատամարտների նշանաւոր թիւը, որոնք իրենց դրութիւնը վտանգաւոր են դդում Սոֆիայում կը ձգտի դէպի Ֆիլիպպօպոլ։ Այստեղի երկու բուլղարական լրագիրները խիստ կերպով յարձակվում են բուլղարական իշխանի և նրա խորհրդականների վերայ, նոյնպես և ոչ պակաս չիմ կերպով խօսում է յոյն օրգան՝ «Ֆիլիպպօպոլիս» լրագիրը։ Խօսակցութիւն կայ, որ չուտով այստեղ կը հիմնուի մի մեծ բուլղարական լրագիր նոյն ուղղութեամբ «Ազատամարտութիւնս անունով։ Մեով բանիս չատ նշաններ կան, որ բուլղարական իշխանութեան մէջ գտնուած ճնշուած և հալածուած ազատամարտները իրենց գործունէութեան կենդրոնը Սոֆիայից կը տեղափոխեն Արևելեան-Ռումելիա, այսինքն կամ Ֆիլիպպօպոլ կամ ուր տեսնէն օգտաւէտ կը լինի՝ Սիլիստրա քաղաքը, որ դրուած է Բալկանեան սարի տեսութեան մէջ։ Ինչ վերաբերում է կ. Պօլսում բնակվող մեր նահանգի գօրապետ-նահանգապետին՝ նա ինչպես յայտնի է՝ չը կարողացաւ ստանալ սուլթանից վճիռ երեք ամսով արտասահման գնալու։ Բաւականին ստոյգ է մնում անգամ և այն, որ սուլթանը պարտաւորացրել է Ալէքսօ-փաչային անյապաղ վերադառնալ Արևելեան Ռումելիա և Ալէքսօ-փաչան դրա ընդդէմ բողոք է արել մեծ վիզիրին՝ պատճառ բերելով իւր քայքայած առողջութիւնը և հանգստութեան կարօտութիւնը։ Նա մինչև անգամ սպառնացել է հրաժարական տալ ստիպողական դիպուածքում։ Բայց Դուբը անզրպուելի կերպով կանգնած է իւր վճռի վերայ և այստեղ ընդհանրապէս կարծում են, որ զօրապետ-նահանգապետը այստեղ կը վերադառնայ իւր պաշտօնը մտնելու։ Ոչ ոք քան երկը չարաչարութիւնները, որոնք ստիպեցին Դրան Ալէքսօ փաչայի արձակուրդը մերժելու՝ ակնյայտ կապուած է բուլղարական իշխանութեան մէջի գործերի տարակուսական դրութեան հետ, որ և հեշտութեամբ կարող է տարափոխուել Արևելեան Ռումելիայի վերայ։ Ահա այժմ մեզ մօտ ամեն ինչ հանդարտ է և բուս երեոյթին այդ հանդարտութիւնը չի խախտուել Սոֆիայի մէջի եղելութիւններով։

***

«Indep. Belge» լրագիրը հաղորդում է, որ Գլադստօնը յայտնել է, թէ լորդ Բէֆֆերինին հրաւանդ է տուած իւր բոլոր եռանդը գործ դնել հայկական խընդիրը վճռելու համար։

«ՄԵԼԻՒԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ»
(ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԵՌԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ).

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25-ին յունիսի։ Պաշտօնապես. Երեկ Թագաւորը ընդունեց չահի նոր նշանակած արտաքոյ կարգի դեսպանին՝ Միրզա Ասատրդուլլահ-խանին, որ յանձնեց իւր հաւատարմագրերը։

«Գօլօսին» հաղորդում են Խարկովից 24-ին յունիսի։ Այստեղի բանկի գործերը չատ խառն են. երևում են բազմաթիւ անյուսալի պարտքեր, որոնց թուում նշանաւոր տեղ է բռնում բանկի դիրեկտօր Ենիվտինի հարիւր հազար պարտքը։ Խնժնեբ Գրէնբէրգը արաւ այստեղի քաղաքային վարչութեան առաջարկութիւն Խարկովի մէջ ջրանցքներ անցկացնելու համար։

ՉԵՐՆԻԳՕՎ, 24-ին յունիսի։ Տօնախմբութիւնը չատ մեծ դործունէութեամբ անցաւ և ամբողջ ժամանակ քաղաքում պահպանուեցաւ կատարեալ խաղաղութիւն։

ԲԵԼԳՐԱԴ, 24-ին յունիսի։ Միլանը չնորհեց Մոնտենեգրոյի առաջին նախարար Տիսային Տակովի չքանչան առաջին աստիճանի։ Սերբիայի նախկին նախարարները Ռիստիչ և Միլայկովիչ թոշակ կ'ստանան։ Իշխան Միլանի վերադարձից յետո դեսպանագիտական անճոռնի չարքում կը լինին մեծ-մեծ փոփոխութիւններ։

ՍՕՖԻԱ։ Խօսում են, որ մեծ ազգային ժողովի նիստը կը յետաձգվի մինչև յունիսի 20, իսկ ոմանք կարծում են, որ ժողով ամենևին չի լինիլ։

ԼՕՆԴՕՆ, 24-ին յունիսի։ Տելեգրաֆն է ստացուած, որ Բ. Դուբը դրկել է Տրիպօլիի հինգ գրասենեակներ կարգ պահպանելու համար տեղական տարբերների մէջ և հարկաւոր ժամանակ դինուորական ոյժ բաժանելու համար օտար միջամտութեան դէմ Տրիպօլիսի երկրում։

ՓԱՐԻԶ, 24-ին յունիսի։ Յարաբերութիւնք Տաճկաստանի և Ֆրանսիայի մէջ աւելի և աւելի լարվում են։ Սուլթանը տեսութեան ժամանակ չը նշանակեց Տիսային։ Ասում են, որ սուլթանը յայտնել է, թէ այդ մարդուն նա այլ և այլ երբէք չի ցանկանալ տեսնել։ Տիսան այս իմանալով՝ կրկին թէ նկատել է. «Սուլթանը փորձով կ'իմանայ, թէ ինչ կը նշանակէ վէճ բանալ մի մեծ տէրութեան հետ»։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲԻՐԺԱ
25-ին յունիսի։

Ակց. բանկ. 1-ին	95	—
— — 2-րդ	94	25
— — 3-րդ	94	50
— — 4-րդ	94	12
Վճռական. 1-ին	227	—
— — 2-րդ	220	—
Արև. փոխառ. 1-ին	92	37
» » 2-րդ	92	12
» » 3-րդ	92	37
Լոնդոն	24	94
Ամստերդամ	126	87
Համբուրգ	214	12
Փարիզ	264	—
Ոսկի	7 ռ.	84 կ.

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

Այսօրվայ ս. Գ. Լուսաւորչի առնի պատճառով վաղը, ամսոյ 28-ին «Մեղուն» չի հրատարակվիլ։

***

Ամսոյս 25-ին Թիֆլիսի Մթածմնդա թաղում մի սարսափելի անցք պատահեցաւ, որին մենք անձամբ ներկայ էինք։ Մարդը հարբած տուն մտնելով՝ սկսում է ծեծել կնոջը, կինը նորա ձեռքից փախչելով դնում է հարևանի տուն, իսկ փոքրիկ երկու տարեկան մանուկը սկսում է լալ մօր պատճառով։ Կատաղած հայրը բռնելով երեխայի կոկորդից խեղդում է խեղճ երեխային, և յետոյ գղջալով իրան գործածի վերայ՝ ինքն էլ խեղդվում է։

***

Լոյս տեսաւ պ. Վ. Մօղեսովի «Մարդու բարոյական զարգացումն» յօդուածի թարգմանութիւնը առանձին տետրակ։ Ծախվում է յօդուած մի չ ք ա ւ ո ր ա ւ ո ւ ա ն ո դ ի. գինն է 30 կոպ., ձեռք բերել կարելի է պ. Տէր-Յովսէփեանի ճաշարանի խանութում «Մոսկաս» հիւրանոցի տակ։

***

Շնորհակալութեամբ տուացանք Բագուից պ. Ա. Գրիգորեանցից «Մօտակ Հայաստան» երգարանի առաջին հատորի երկրորդ տպագրութիւնը։ Գինն է 1 ռուբլի. կարելի է առնել նոյն իսկ հրատարակչից հետեւեալ հասցէով. Авану Лазаревичу Григоріанцу, въ Баку։

***

Յօդուած վարձի վանքի դրատպարանի տացանք 2 օրինակ «Մարդու բարոյական զարգացումն» տետրը թարգմանիչներից։

Խմբագիր Պ. ՍԻՄԷՕՆԵԱՆՑ։
Հրատարակիչ Հ. ԻՆՃԻԱՃԻՆԵԱՆՑ

ВОСТОЧНАЯ ВОЙНА

ОТКРЫТА ПОДПИСКА

на ежемѣсячный журналъ

„ВОЕННОЕ ОБОЗРѢНІЕ“

(ИЗДАВАЕМЫЙ ПО Г. ТИФЛИСУ)

Съ 1-го іюля 1881 года по 1-е января 1882 года.

Цѣна за полгода 6 руб.

Кромѣ того можно подписаться на 3 мѣс.—3 р. 20 к., на 1 мѣс.—1 р. 20 к. Иногородніе принимаются съ 1 числа каждаго мѣсяца и по мѣрѣ поступленія денегъ. Разсрочка не возбраняется, но согласіемъ съ администраціею журнала.

Адресъ: Тифлисъ, Банковскій переулокъ, домъ Гаспаровой.

ИЗДАТЕЛЬ А. С. Фрейманъ. РЕДАКТОРЪ А. В Сперанскій.

Разрѣшено цензурою. Тифлисъ, Банковскій переулокъ, домъ Гаспаровой.

ТИФЛИССКІЯ ОБЪЯВЛЕНІЯ

Печатаются 2 раза въ недѣлю.

Для иногородныхъ . . . . 4 р.

На Двороповой улицѣ въ домѣ Сарафджева. 3–6

ПРОДАЕТСЯ новое **ФОРТЕПІАНО** фирмы Шредеръ. Можно видѣть ежедневно отъ 9 до 11 час. утра и отъ 3 до 5 час. по полудни въ магазинѣ Шредеръ, на Головинскомъ проспектѣ, противъ Александровскаго сада. 6